

# ԳՈՀԱՐՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՅ ՄՕՏ

Գրեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Հին հայ առեւտրականի առեւտուրի կարեւոր նիւթերէն մէկն ալ եղած է զանազան թանկագին քարերը կամ զոճարները:

Պատմական Հայաստանի սահմաններուն մէջ ցարդ զոյութիւն չեն ունեցած իրապէս թանկագին քարերու հանքեր: Այս իսկ պատճառաւ հայ վաճառականները դրացի կամ հեռաւոր երկիրներէ ներածած են եւ, ուրեմն, արտածած են թանկագին քարեր:

Զինական տարեգրութեանց համաձայն, «Հաներու մեծագոյն միապետին Վու-Գիի տիրապետութեան ժամանակ (140-86 Քրիստոսէ առաջ), ... Թարիմ գետի հունը լեցուած էր Զինական դաղթականներով. եւ կարաւանները արեւմուտք կ'երթային մետաքսով, լայքայով եւ ճէյտով բեռնաւորուած՝ փոխելու համար զանոնք Հայաստանի եւ Հռովմի ոսկիով եւ արծաթով»:1)

Ճէյտը Զինական մեծարժէք եւ հազուադիւր քար մըն է, որուն նոյնիսկ հրաշագործ կարողութիւն կը վերագրուէր:

Դժբախտաբար, յականէ յանուանէ վկայութիւններ կը պակսին ինծի համար զոճարներու վաճառականներու մասին: Եւ աւելորդ ընդհանրացումներէ խուսափելով՝ ստիպուած ենք մինչեւ 1580 զալ, որպէսզի մեր առաջին ծանօթ հայ զոճարավաճառին հանդիպինք:

Ըստ Հ. Ղ. Վ. Ալիշանի՝ Նուրում, որդի Փիրումի, կարնեցի զոճարավաճառ հայ մը 1580-ին Վենետիկ կը գտնուէր: Նուրում եւ երկու հայեր, Գէորգ ու Յակոբ, «Հռովմ գացեր են եզեր, ուր Նուրում զոճար ակունք տա-

րեր է»:2) Բնական է առեւտուրի համար: Իսկ 1602-ին Անկիւրիացի Մագսուտ անուն հայ զոճարավաճառ մը կը մեռնի Վենետիկ, եւ «Պետրոսի եղբայր Մկրտիչ նոյնպէս զործակալ կարգէ զՄ(արկոս) Մուրատ, իր մեռած տիրոջ Մագսուտի 177 կարկեսան (turchini) ականց տուփը պահանջելու ի հինգ Գիտնոյ»:3)

Պէտք չէ խորհիլ, որ Հայ զոճարավաճառներու պատմական ցանկը ասոնցմով կը սկսի, սակայն, դժբախտաբար, ծանօթ նիւթերը ասոնք միայն կուտան մեզի:

Առաքել Դաւրիթեցի զոճարներու մասին մասնաւոր դիւրիս մը նուիրած է իր պատմութեան մէջ, որուն վերջը կ'աւելցնէ.

«Զայս բանքս, որք վասն ականց են՝ զոր ահաւասիկ զրեցաք, այժմու ժամանակին ժամանեալ ոմն քահանայ Սարգիս անուամբ ի մերս ազգէ, հմուտ եւ տեղեակ բանից զրոց, որ բնակեալ էր ի քաղաքն Բերիայ՝ որ այժմ ասի Հալապ: Եւ էր կարի վարժ ի լեզուն Արապի, եւ Օսմանցեոց եւ Ֆոանկին. այլ եւ ծանօթ Հոռոմի լեզուին եւ Ջհաի լեզուին. եւ էր ինքն արուեստիւ ականագործ՝ որ զպատուական ակունս հարթէ եւ շինէ. այլ եւ զնոց եւ վաճառող սոցին»:4)

Բարեբախտաբար, այս Սարգիս քահանայի մասին ունինք ուրիշ աղբիւրներէ յաւելուածական ծանօթութիւններ ալ: Արտաւազը

2) «Հայ-Վենետ.»— Ս. Ղազար, 1896, էջ 398:

3) Անդ՝ էջ 406:

4) «Պատմութիւն»...— Վաղարշապատ, 1896, էջ 595:

1) The Outline of History.— by H. G. Wells, էջ 475: